

**ԻՐԱԿԱՆ ԹՎԵՐ  
ԿՈՈՐԴԻՆԱՏՆԵՐ  
ԲԱԶՄՈՒԹՅՈՒՆՆԵՐ**

**§ 3. ՀԱՏՎԱԾՆԵՐԻ ՉԱՓՄԱՆ ՊՐՈՑԵՍԸ ԵՎ ՌԱՅԻՈՆԱԼ  
ԹՎԵՐԻ ԴԱՇՏԻ ԸՆԴԼԱՅՆՈՒՄԸ**

**1. Հատվածի երկարության չափումը և ռացիոնալ թվերի  
դաշտի ընդլայնումը**



**Առաջադրանքներ**

1.  $[0;1]$  հատվածը բաժանվում է 10 հավասար մասերի և վերցվում է նրանցից աջակողմյանը, այսինքն՝  $[0,9;1]$ -ը: Այդ մասը ևս բաժանվում է 10 հավասար մասերի և վերցվում է ստացված հատվածներից ձախակողմյանը: Վերջին հատվածը նույնպես բաժանվում է 10 հավասար մասերի և վերցվում է այդ նոր հատվածներից աջակողմյանը, և այդպես շարունակ: Ապացուցել, որ այդպիսով ստացված ներդրված հատվածների հաջորդականությունը  $Q$  դաշտում ունի ընդհանուր կետ: Ո՞րն է այդ կետը (թիվը):
2.  $ABC$  ուղղանկյուն եռանկյան էջերը՝  $AC = 1; BC = 2$ : Գտնել (միկրոհաշվիչի օգնությամբ)  $AB$  ներքնաձիգի երկարությունը և ներդրված միջակայքերի այն հաջորդականությունը, որը ստացվում է մինչև 1; մինչև 0,1; մինչև 0,01 մինչև 0,001 և այլն ձգգրտությամբ:
3. Ապացուցել, որ եթե  $c \notin [a;b]$ , ապա  $(c-a)(c-b) > 0$  և հակառակը:
4. Ապացուցել, որ եթե  $[a;b] \supset [0;1]$ , ապա  $0 < b-a < 1$ :